

ԲԱԺԱՆՈՐ ԱԿՐՈՒԹԻՒՆ  
 Պոլիտիկայի համար  
 Տարեկան 10 Ֆր.  
 Վեցամսեան  
 Արտատպարանի ցուցակ  
 մարտի 15-ին  
 Վեցամսեան  
 ԿԱՆՈՒՊ. 16 Ֆր.  
 —)  
 Գրութիւնքի և չին տպարանի  
 —)  
 Իրանում ընդ 20 տարեկան  
 քիսէ. Երեւան անկի ան-  
 գամներու համար 20 Շի  
 զեղ կրկան:

# ՇԱՌՓՈՒՄ

համար և գրամ գրկի  
 համարներու համարիկ.

Редакция на вестникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie).

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 Կ. ԶՐԱՏԱՐ Ա. ՈՒՆԻ ՉՈՐԵՔՆԱԲԻ ԵՒ ՇԱՌՓՈՒՄ ՕՐԵՐԸ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ.  
 АДВОКАТЪ

*Check in London*  
*Deanne (Mrs. ...)*

## ՋԻՂ ԵՒ ԵՐԱԿ

—)(—

Անցեալները երկուստեայնե-  
 րուն խորագրով յօդուածի մը  
 մէջ, արտասահմանի ամէն հա-  
 յաշատ կեդրոններուն մէջ երի-  
 տասարդական իրական միու-  
 թիւններու խօսքն ըրած էինք,  
 այնպիսի տուար մարմնի մը որ  
 տեղւոյն բոլոր բարոյական և  
 մտաւորական ընտիր ուժերէն կազ-  
 մուած ըլլար, և հակէր քաղաքին  
 ազգային ամէն կարգի գործե-  
 րուն վրայ, առաջը առնէր և  
 արգիլէր ազգայնաս հոսանք-  
 ները, մէկ բառով զլիստորուզ-  
 զիչներէն մէկը ըլլար հանրային  
 կարծիքին:

Գիտենք թէ ամէն տեղ մամ-  
 լոյ յայտնած զազափարները և  
 իղձերը մէկ օրէ միւսը չեն իրա-  
 կանանար և սակայն անոնցմէ  
 շատ քիչերն են որ օգին մէջ  
 կանհետանան անդամ կերպով.  
 շատերը, ընականաբար անոնք  
 որ բաւական գրականութիւն կը  
 պարունակեն իրենց մէջ, երբեք  
 չեն կորիւր և օրին մէկը անպատ-  
 ճառ կը ծլին ու կը բողբոջին  
 մտքերու մէջէն ուր պահուած  
 էին:

Աւտի երկուստեայնեբու այդ  
 ակնարկուած միութեան խնդրէն  
 չենք յուսահատած. և համբե-  
 րատար ոգիով սպասելով անոնց  
 ուժանակուն, այսօր իբրև ա-  
 ռաջիւնին շարունակութիւն ուրիշ  
 առաջարկ մը պիտի ընենք, որ ա-  
 լելի լայն աստիճանի մը վրայ  
 կը հանգչի և որուն օգտաներն  
 ալ նոյն համեմատութեամբ ըն-  
 դարձակ են. զի փոխանակ քա-  
 ղաք մը ընդգրկելու ամբողջ եր-  
 կիր մը կընդգրկէ:

Աւելի բացորոշ խօսինք:  
 Այս պահուս և թէ արտասահ-  
 մանի հայաշատ կեդրոններէն  
 Պուլկարիան առնենք, պիտի  
 տեսնենք որ ամբողջութիւն մը  
 կազմելէ հետո է: Մարմին մըն  
 է պարզապէս, որուն զանազան  
 անգամներուն միջև չկան ջիզեր  
 և երակներ որոնց մէջէն շրջա-  
 բերի ազգին կենսականութեան  
 արիւնը:

Չափազանցած չի պիտի ըլլանք  
 ուրեմն և թէ անուանենք զայն  
 կազմալուծուած մարմն քանի  
 որ կենդանի մարմնի մը ներդաշ-  
 նակութենէն զուրկ է, քանի որ  
 զլուր, սիրտ և ձեռք իրարմէ  
 անտեղեկ են:

Վասն, Ռուսոյք, Ֆիլիպէ,  
 Պուրկալ, Շուսլա, Սիլիստրէ ևն.  
 իրարմէ բնաւ տեղեկութիւն չու-  
 նին: Հարեւանցի տեղեկութիւն  
 մը միայն լրագիրներէ կը տա-  
 նան: Եւ որովհետև լրագրի մը  
 գոյութիւնը գիտուածի գործ է,  
 որ կրնար կամ կրնայ պակսիլ,  
 ասկէց կը հետեւի թէ քանի մը  
 ժամ իրարմէ հետո զանուոյ  
 հարանակ էջտեր իրարու գո-  
 յութիւն անգամ պիտի անդիտա-  
 նային, անպատի մը մէջ սըլի-  
 սուած ջիբ ու ցան վրանարնակ  
 ցեղերու նման:

Ողբալի և անիմաստ կացու-  
 թիւն է տօրիա: Եւ Պուլկարիոյ  
 հայերուն արամաբանական ամ-  
 բողջութիւն մը տալու, զայն  
 ճշմարիտ մարմնի մը չ'երծեւր-  
 համար, հարկ անհրաժեշտ է ե-  
 րակներ և ջիզեր հաստատել ա-  
 նոյն անգամներուն, այսինքն  
 Պուլկարիոյ հայաբնակ քաղաք-  
 ներուն միջև: Նոյնը Ռուսմանիոյ,  
 Եգիպտոսի, Ամերիկայի համար:

Թէ ո՞րն է այդ համբաւաւոր  
 ջիզն ու երակը հաստատելու մի-  
 ջոցը: Ասկէց աւելի զիւրին,  
 գործնական և իրականալի բան  
 չի կրնար երեւակաւուիլ այդ ա-  
 ղաւ և ամէն տեսակ գիւրու-  
 թիւններ ընծայող քաղաքակր-  
 թուած երկիրներու մէջ, որոնց  
 անունը տօրինք:

Ամէն տօրի նոյն երկրին բու-  
 լոր քաղաքներէն ելած պատ-  
 ուիրակներ որոշուած օր մը յար-  
 մար աւղ մը միանալով զլուրի  
 գլխի տան և այսպէսով ամէն մէկ  
 հայաբնակ երկրի մէջ՝ զատ զատ  
 հայութեան իրական ամբողջու-  
 թիւններ կազմեն:

Այս խօսք է մեր առաջարկը,  
 որուն իրականացումը կրնայ ամ-  
 բաւ օգտաներ, տեսակ մը՝ ա-  
 տարեկան օր մը մտաւոր բերել մեր  
 ազգայինները գործերուն մէջ,  
 անհուն և խելացի զարկ մը տալ

անոնց:

Երբ որ ամէն քաղաքներու  
 պատուիրակները մէկտեղին, ու  
 փոխադարձաբար իրարու պար-  
 զեն իրենց պատկանած քաղա-  
 քին կայսրութիւնը և սէտքերը,  
 ա՛ն առնն միայն գուրս կը ցայտե  
 թէ ամէնքը մէկուն՝ և մէկը ա-  
 մենուն համար ինչե՛ր կրնան ը-  
 նել: Այդ ժողովը պէտք է վճռէ  
 կրթական հարցը, որոշէ գաս-  
 տիարակութեան աստիճանը ա-  
 մէն մէկ անգի համար, ինչպէս  
 նաև հետեւելի ընդհանուր ուղ-  
 ղութիւնը. այդ ժողովը պիտի  
 մշակէ ազգայն կեդրոնական  
 վարժարանի մը գաղափարն ալ  
 և պիտի խորհի թէ ինչե՛ր կան  
 ընելիք բնականաւ երկրին ազ-  
 գայիններուն բարոյական և արն-  
 տեսական պայմանները ձաղկե-  
 ցընելու համար. պիտի վճռէ թէ  
 երկիրը ի՞նչ չափով և կերպով  
 մասնակից ըլլալու է ազգային  
 դատին. և այլն:

Այդ ժողովը ընդհ. մարմնին  
 ջիզն ու երակը պիտի ըլլայ.  
 միանգամայն սիրով որուն մէջ  
 նոյն երկրին բոլոր հայերուն  
 իղձն ու փայլազները պիտի բա-  
 բախեն: Մէկ խօսքով, ժողո-  
 վուրդին ճշմարիտ «առաջնորդը»  
 պիտի ըլլայ, անշահախնդիր,  
 անխարդախ և ուղղամտ՝ գերի  
 վեր ամէն զերաւատիւէ:

Գաղափարը կարելի է իրակա-  
 նացընել նոյն խօսքի շարաթէն,  
 մէկ ամիսէն. բաւական է որ քա-  
 ղաքներէն մէկուն թաղ. խոր-  
 հուրքը նախաձեռնարկ ըլլայ և  
 փութայ կարծիքներու փոխանա-  
 կութեան միջնորդ ըլլալ իր  
 տարբեր անգերու պաշտօնակից-  
 ներուն հետ:

Իսկ եթէ չուզենք մեր աղչ-  
 գործերու բարեւարտութեան հա-  
 մար ամբողջ քաղաքակրթեալ  
 ազգերէ ընդունուած այս գրու-  
 թիւնը որդեգրել, և եթէ այդ  
 տառապող գործերը եթէ ոչ բո-  
 լորովին քառային՝ գէթ կազմի  
 կազմ և անդիտակից գրութեան  
 մէջ թողունք, առանց օգտուելու  
 մեր վայելած լայն աշատութիւն-  
 ներէն որ հրաշքներ գործել  
 կրնան տալ մեզի, անշուշտ հան-

ճարի և ձեռներէցութեան ոգի  
 կրելու ազգայնացը չէ որ առած  
 պիտի ըլլանք. ընդհանրակը:  
 ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԽԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆ ՍՈՎԱՏԱՆԶ

Հ Ա Ն Գ Ա Ն Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

—)(—

Թ. ՅՈՒՑԱԿ

Գումար Բ. ցուցակի	Ֆր.ՍՃ.
ՈՖ	5.—
Ա. Ա. (Պուրբէշէ)	5.—
Համագումար	277.40

## ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլիս, 15 Մայիս

Մայրաքաղաքիս մէջ տիրող  
 արտակարգ հակողութիւնը ուշա-  
 գրութիւնս կը դրուէ: Լսեցի որ  
 սեղեկութիւն տրուեր է պալատ  
 թէ հայերը նորէն ցոյց պիտի  
 ընեն Պոլսոյ մէջ և նոյն խօսք  
 երևուման Խաչի տօնին օրը, մինչ  
 Պատրիարքը պատարագելու հա-  
 մար Գուրուչէշմէ կը գտնուէր,  
 զիչերանց պալատական մը զըր-  
 կուեր է Պատրիարքին իմանա-  
 լու համար թէ ո՛ր աստիճան  
 ստոյգ են այս լուրերը. Պատ-  
 րիարքը հերքեր է այս յերիւ-  
 բանքը և ջանացեր է ապահովել  
 թէ ոչ ներկային, ոչ ապագային  
 մէջ այդ պիտի բան մը անգի չու-  
 նենար:

Հոս, հաւատարմաբար ընէր կը  
 տեղեկացնեն թէ Բարթոլոմէոս  
 եպիսկոպոսն է այս լրատուն:

— Հիմակ արհաւիրքներու մէջ  
 են Պոլսոյ հայերը. նորէն սկսած  
 են «այսօր դէպք կայ, ոչ, եկող  
 շարժու պիտի ըլլայ» և այլն  
 խօսքերը. ալ երեսակայեցէք  
 թէ ինչպէս կարելի է հանդիսա-  
 ապրիլ այս պայմաններուն մէջ:  
 Ազգին ու կառավարութեան  
 միջև յարաբերական ըրած  
 գործերն ալ շատ գէշ ընթացք  
 մը ունին. չի կոյ բան մը որ յա-  
 ջուղի: Տէգրան Սրբիարեան որ

Եգիպտոսէն հոս վերադարձաւ . 20 օրէ ի վեր բանտն է , թէպէտ Պատրիարքը անոր անցեալը , ներկան ու ապագան երաշխաւորած է յատուկ գրութեամբ մը : Բայց ոչ ոք կարեւորութիւն կուտայ և հիմա Տիգրան Արփիարի բերել պատանդ վար կը դրուի որ Արփիար Արփիարեան վերագառնայ : Այս խնդիրը կայսեր ներկայացուած է արդէն և իրատէի կապատի :

—Պետական վարժարաններուն մէջ ձեր ընդունուելու համար որոշուած 25 հայ աղաքը իրենց տեղերը նստած են և այդ ի ձայն փողոյ հռչակուած գործն ալ շուրն ինկած է :

—Դարձեալ սկսան ձերբակալութիւններն ու հարցաքննութիւնները , իբր թէ յեղափոխականներ դռնելու համար . ստակական խաղերուն վերջը չիկայ : Թուրք թերթ մը , «Մալիմաթ» , որուն խմբագիրը կայսերական ամէն փոստահութիւն կը վայելէ և որ անցեալ շաբթու սպանելու գիտմամբ իր վրայ յարձակող երկու անձերու հարուածներէն վերստոր վիճակի մէջ հազիւ ճողպրեցաւ , երկար յոգուածներով խտրու կը քննադատէ Պոլսոյ և մասնաւորապէս Բերայի ստակականներուն զեղծումները , գէպքեր և իրողութիւններ ալ թուելով . միւս թերթերը և ոչ իսկ կրնան արտատպել այս մենաշնորհեալ գրուածները : Եթէ մարդիկ լռեն՝ քարերը կաղաղակին , ահա իրողութիւնը :

—Մէկ քանի օրէ ի վեր մայրաքաղաքս կը գտնուի Պուլկարիոյ իշխանը : Ընդունելութեանց հանդէսները տեղական թերթերու մէջ պիտի կարգաք , իսկ ինչ որ չպիտի տեսնաք անոնց մէջ , սա է թէ հինգշաբթի օրը Ռուսիոյ կայսեր գահակալութեան սարեղարձին առթիւ դեսպանատան մատրան մէջ կարգացուած գահաբանական աղօթքին ներկայ գտնուած պահուն , դեսպան Պ. Չինոյիլիֆի հրահանգով , առանձին աղօթք մը կարգացուցաւ իշխանին համար , որ կեցցէններով ու խանդավառութեամբ ընդունուեցաւ : Իշխանին Պոլիս այցելութիւնը քաղաքական նպատակի կը վերագրուի :

—Ճէվատ պէյի Բեթերսպուրկէ ձեռնունայն վերադարձէն յետոյ , ուսերու գէմ ատելութիւնը սեւելի և սաստկացած է : Առանձին պատուիրակներ ՂՐԻ կուեր են Աւստրիոյ և Գերմանիոյ արքունիքները կրէտէի խնդրին համար . բայց ամէն փորձ սպարդիւն պիտի մնայ , ինչպէս կերելի : Պոլսոյ Անդլ . դեսպան անուանեցաւ Բեթերսպուրկի Անդլ . դեսպանը . այս անուանումը մեծ կարեւորութեամբ կը գիտուի հոս , որովհետեւ արեւելեան խնդրին վրայ Ռուսիոյ և Անգլիոյ միջեւ համաձայնութիւն մը կը նըշ-

մարուի այս ընտրութեամբ : Բ. Գուրը իր հաւանութիւնը զեւշտուաւ :

—Պատրիարքը անցեալ շաբթու երկու անգամ պալատ գնաց : Շարժառիթը Սիսի խնդիրն է . հիմակ Օրմանեան կը զայ թէ ինչ էր ըրածը : Դատական նախարարութիւնը բերանացի ըսած է թէ՛ Սիսի կաթողիկոսը Ստեցիլները իրենք պիտի ընտրեն Ստեցիլներէ : Աս է առաջին և վերջին խօսքը , որ այսօր վաղը գրաւորապէս ալ պիտի հաղորդուի Պատրիարքաւանին : Միւս կողմէ , Ֆուռուղիին Սիսի վանքէն կիլիկիոյ թեմերը շրջաբերականներ կը զրէ՛ և կը պատուիրէ որ հանրագրութեամբ Գաղանձեանը կաթողիկոս ուղեն , որուն երեսնէն մեծամեծ բարիքներ պիտի ծնին աղղին համար : Ահա այս գործին ներկայ վիճակը , զոր աղղը Օրմանեանի աշալը շուրթեանը կը պարտի :

ՍԱԲ

(ՄԵՐ ՄԱՆԱԽՈՐ ԲՁՅԱԿՅԷՆ)

Ֆիլիպի , 15 Մայիս

Այս շաբթու քաղաքս մեկնեցան եօթնասուներկու գաղթականներ ամենքն ալ Պոլսեցի : Հարուստները մասնաւոր վակոն մը վարձած էին մինչև Պուլկար , ուր վճարուեցան նաեւ անոնց չարեանի ծախքերը : Տակաւին լուր անուած չէ թէ կ. Պոլիս ինչ ընդունելութիւն գտան : Թէ երկաթուղի վարչութիւնները և թէ չարեանի գործակալութիւնները տուին ամէն տեսակ զիւրութիւններ : Այս գաղթականները ամենքն ալ կը պատկանին գործաւոր դասակարգին և միշտ կը գտնուուէին թէ չարաչար աշխատելով հանդերձ չէին կրնար իրենց օրապահելը ճարել : Կը սարակուսիմ իրենց Ըստաններուն ճշգրտութեանը : Իրաւ է որ մէկ երկու ամիսներէ հետէ անօրինակ տագնապ կը տիրէ տեւտրական , բայց ճշմարտութիւնը սա է թէ մեր Պոլսի բարեկամները չեն կրնար Պոլսէն դատ ուրիշ տեղ բնակիլ : Այս գաղթող տարրը վարժուած կը թուի ապրիլ ծուլութեամբ և զարտուղի միջոցներով : Պոլիս անդուգական է այդ մասին : Հայ հարուստներու և թուրք պաշտօնեաներու ռաքերը լղելով ապրուստ հանել սովորական դարձեր է անոնց համար : Պուլկարիոյ միջնորդը մահացու էր : Մեռան , գնացին հայուն համբաւուած ճարպիկութիւնը , արհեստագիտութիւնը և գերազանցութիւնը ուրիշ ազգերու վրայ : Երբ հայը կը սրտտախօսէ , ուրիշ ազգեր կը յառաջդիմեն : Անցաղիք ստանալու համար ինչ նախատինքներու տոկացին : Թուրք հիւպատոսը իսլամ երաշխաւորներ ուղեց , գտան : Իսլամաց իմամին վկայութիւնը հարկ դատեց , ճարեցին : Վաճակեց , հայտնեց , նորէն գացին և պաղատեցան : Ազգային արժանապատուութիւնը սարսափելի հարուած մը կտանար ազատ Պուլկարիայի մէջ : Ուրեմն անգամ մըն ալ արաւայտանք մեր յաւիտեանական հակակրօթիւնը թուրք կառավարութեան և իրեն տրժանի ներկայացուցին Ֆիլիպի :

Շատ ուրախալի է որ գաւառացի հայ գաղթականները շատ աւելի տո-

կուսութիւն և պարկեշտութիւն կը ցուցնեն : Ասոնց խմորը շատ աւելի մաքուր է քան միւսներունը : Ոմանք բեռնակրօթեամբ , ոմանք արհեստներով և մաս մըն ալ վաճառականութեամբ կը պարապին և կը ջանան հայրենիք օգտակար անգամներն ըլլալու : Հրապարակի տագնապը ասոնց ալ կազգէ անշուշտ , բայց աշխատութեամբ և խնայողութեամբ կը յաղթին ամէն բանի : Անձկութեամբ կապուեն այն օրին երբ պիտի վայելեն ազատ հայրենիքը : Ահա յուսալից տարրը : Դրժարխտարար ցաւալի անփութութիւն մը ունին երկրին լեզուն սովորուած , օրէնքներուն անգիկանալու և բարքերը ուսումնասիրելու : Մտաւորական զարգացումի պոկասութիւնն է պատճառը : Գիշերային և կիրակնօրեայ զարգացումը , լսարանները , ընթերցարանները կրնան լրացնել այդ պակասը զէթ մէկ աստիճան , բայց այդ միջոցներ փակուած են իրենց զէմ անղացի մեծ աղաներուն հակակրօթեամբ :

Այս մեծ աղաները զիւսային ուրախութեան մէջ են Վառնայի փողոցային թերթին երեսու միւս համար ուր ամէն օր նախապիտեանք և հայհոյութիւններ կը տեսնեն ազգային յեղափոխութեան զէմ : Թէև միշտ հակադիմադրական և թրքամուկեղած են , բայց համարձակօրէն չէին կրնար յայտնել իրենց գաղափարներ : Կը պաշտպանէին լրտեսները և թրքամուկները ու կը ճղէին չէզոքացնել ազգային յեղափոխութեան մասին ցուցումը համակրօթիւնը : Կը կարծեն թէ հիմա բերրը ներսն առած են : Թիւրքու Սուլթանը իրենց չափ ուրախ չէ : Չեն զիտար թէ աղատներ կը գտնուին ամէն տեղ , բայց նպատակը և գաղափարը կը յառաջդիմեն անարգել : Յետագիտական դասաւանդներն ալ կօզնեն ասոնց : Մէկ բան պակաս էր . փողոցային թերթին փողոցային թղթակից մը գտնել : Եթէ գոյւթիւն չուենար , կտակողէին . բայց մէկ հատ կարարդէն յանձին Ա. Շ. ի : Չունին կանչեցին ազգային մասնակիները կրթելու գործին և զրեց իր համբաւուոր նամակները , պարսաւելով այնպիսի անձեր որոց եթէ մէկ հաղաբերորդ պատուաւորութիւնը ունեցած ըլլար , տակաւին կրնար մարդու կարգ անցնիլ : Թո՛ղ ամբողջ Պուլկարիա գիտնայ թէ սա առաջնակարգ ստախօս մը և աղտոտ խաբար մըն է : Բազմաթիւ քաղաքներու մէջ իր շորթած գրամներուն արձագանք կը հասնի ամէն օր : Անօթիւնը խըմրակին պիտի չհիմա Ա. Շ. : Դպրոց , եկեղեցի , սրճարան , զբօսատեղիներ ազատ չեն այս խմբակին շահասակութիւններէն : Ապրիլն :

Կլասագոնի մա՛ը մեծ ցաւ պատճառեց ազատական դասակարգին մէջ : Թէև Մեծ Մերուսին չը կրցաւ մեծ օգնութիւն մը ընիլ հայկական դատին , բայց ամենքս ալ կզգանք թէ որչափ համակիր էր մեզ և իր վերջին նշանաւոր ճառերով ցուցուց թէ ինչ ցաւով և տխրութեամբ կը զիւտար մեր զժբախտութիւնները : Հայ հասարակութեան կողմէ հեռագիր մը քաջաւանդու տիկին Կլասագոնի հետեւեալ բառերով զոր հրատարակեցին արդէն անգլիական թերթեր . «Կը մասնակցինք ձեր սուղին և կարաւայտանք մեր անհուն ցաւակցութիւնը» : Մտադրութիւն կար այս կիրակի հոգեհանգստեան պաշտօն

կատարել ի յիշատակ Մեծ Մերուսին , բայց կը լսենք թէ տեղացի ջոջ աղաները պաղ ընդունելութիւն բեր են այս գաղափարին : Եթէ մեր բարեկամները մէկ երկու հարիւր ֆրանք խոստանային վճարել իբր հոգեհանգիստի տուրք , ամէն ընդդիմութիւն կը մարէր : Աննման «Եղիպտացի» ին մահուան սոթիւ ալ նոյն ընդդիմութիւնը կար , բայց քսանըհինգ ֆրանքի տուրքը զոր գանձեցին և կեղեցիպանները , զարեցուցածն ինչ Գործնական մարդեր են մեր ջոջ աղաները . բաղադրեալ նկարագիր ունին : Թրքամուկութիւնը կը դադրի գրամի հրապարկէ և հիմալի գոյնին սոջե :

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԵՇԱՍԱԿՆԵՐ

Դեղիս քրդարնակ է , Գաւալ ու կարկառ գաւառները իրարմէ բաժնող հարաւակողմի լեռանց ստորաք կը գտնուի : Այստեղ կը բնակի նշանաւոր աւաղակապետ իման Մէհմուտի կզօր որդի՛ Դուլի իման բէկը : Այս արիւնարբու բէկը իր գործած ամէն տեսակ խժողութեանց ու աւերումների փոխարէն՝ թուրք կառավարութեան ամէն տեսակ շնորհներ կը վայելէ . ինքն իր գնդակով մեռուցած է Աղթամարի Պիլպուլ կաթողիկոսը ու Ռշտուենաց շատ մը զիւղապետները : Ինքն է որ ամէն անգամ կը կազմակերպէ գողերու և ոճրագործներու խումբերը՝ Ռշտուենիք , Մոքս , Կարկառ ու Կարճկան գաւառներ ի հայերը կողպատելու , ու թրջուաւանդներու , վերջապէս այդ գաւառական թուրք վարչութեան (իտարէի) ժողովին աւազ անգամը : Դուլի իման բէկ , 95 ի և 96 ի ընդհանուր կտորածի առաջնորդն ու զբոշակակիրն է : Ինքն իր խումբերով աւերած , այրած ու ամայացուցած է Գաւալու գաւառի ու Կարկառի հայ զիւղերը , իր և իրենցիկ գնդակներով անհամար անմեղ հայեր կեանքէ զրկուած են ու շատ խեղճ իր սուրով խողխողած : Իր արիւնառւշտ վայրագութեամբ՝ նահատակ հայոց ունեցածներով իր տունն ու անմեղ կուսերով իր հարէմը հարստացուցած է : Երբեք ի սորձրդաւոր հրամանները ա՛յդ քան անթերի գործադրող այդ գաղանարբոյ բէկին ի հարկէ կատարական ամենէն մեծ շնորհները անպակաս են : Այնպէս որ , այսօր , այս վայրկեանին այդ ձիւղը իր գործած ամէն տեսակ ոճիրներ վարձքը մէ՛ծախիչ է և օսմանիչ շքանշաններով ստացած է ու լիագոր սէր է :

Այս տխուր նկարագրութիւնը իրենց սեւ գոյներով մեր մաքերը շարքիկեցին . թո՛ղ ներքէ ինձ ընթերցողը օր զինք քրդարնակ այդ աւաղակային որջին զիմաց այնքան նեղեցի : Թողնեք ուրեմն այս սոնիմալ գաղաների բունը , շտպենք հեռանալ այդ զիւղատիչներէն . Շարուակեկեք մեր ճանապարհն և ուրուագծենք մեր ա՛յնքան սիրելի յիշատակները :

Հոս ճանապարհը զաշտային է ու հարթ , ալ կողմը կը մնան Նորգիւղ ու Մոխրաբերդ հայ զիւղերը՝ Ընծաքարի յարակից արեւելակողմի լեռնաշղթայի ստորոտը : Այդ լեռան անդիլ երեսը , Գաւալի արեւմտակողմը երկու բարձրաբերձ լեռանց մէջտեղ , Մոխրաբերդին զրէթէ երկու քուկէս ժամ հեռու՝ զեղատեղի

անտանները ու պուրակները մէջ շինուած է Կարմրակայ վանքը: Այս վանքը աւելի ամրոցի մը տեսք ունի ու ծառայած է իբր ամարանոց Արծրունեաց Պայազատներին: Իր շինուածքը նրբակերտ է ու հայկական անցեալ փառքերի բեկորները կը յիշեցունէ: Աղթամարի անդօր գերեզմանները սակ, շատ անմխիթար վիճակի մը եկած հասած էր ան:

Նոր զիւզի ու Մոխրաբերդի հանդէպ, Սարէք զիւզի ստորոտէն անցնող ճամբան մեր գնալիք պրզտալէն բաժնուելով կերկարի զկայի նարեկի վանքը, հոն ուր նարեկացի վարդապետը սնաւ ու աղօթեց: Այս նշանաւոր վանքի մասին մեր յիշատակները գրել ուրիշ անդամի թողլով, մենք շարունակենք ճամբան, որ ահա կուգայ Ս. Յակոբայ առատահոս աղբիւրին վրայ: Ասկէ 15-16 տարիներ առաջ հոս «Գաւալու Սան» անունով շէնք մը շինուած էր, ու տեղական գոյմազամբ իր պարագաներով հոս կորջանար, բայց այդ թուականէն ի վեր, գոյմազամբ թեան պաշտօնատեղին Ոստան փոխադրուելով, այդ շէնքն ալ քայքայուած է: Գանի մը վարդիկան այս պաղ աղբիւրի քով նստած կը դիտենք Վանի Ծովը որ Առաքէր, Աղթամար ու Մանածիւր կղզիների շուրջը կը ծփծփայ:

Ս. Յակոբի աղբիւրէն մինչ Ախա վանքը, (Աղթամարայ դուրսի տունը) գրէթէ երկու ժամ կը տեւէ: Կը քշենք մեր ձիերը արագ, որովհետեւ մեր սիրտը կը տանջէր Աղթամարը տեսնելու փափագը: Կանանչ դաշտեր ու նորածիլ մարգեր իրենց հիանալի տեսարաններով կը կարծեցընեն ճամբան ու մենք յափշտակուած մտքով կը մտնենք Ախավանք:


Աղթամարայ կղզիի զխմաց, Փշա վանից հիւսիսային արևմտակողմը, Վանի Ծովի եզերք, երկու կողմէ զանազան պողպատե ծառերի ու մշրգաբեր տունկերի պարտէզներով զարդարուն գետնի վրայ շինուած է Ախա վանքի դուրսի տունը—Ախավանք:

յորդանոս առու մը՝ ցամաքի կողմէն կոտորէ ատոր պարտէզներն ու դարատանները ու ջուրի այդ առատութիւնը, ապրիլէն սկսեալ մինչ հոկտեմբեր, թարմ կանանչութիւն ու բնական ստուգութիւն մը կենդանի կը պահեն իր շուրջը: Հոս շինուած է աղօթատեղի մը, վարդապետի ու պաշտօնէկց սենեակներ՝ ու կաթնղլկոսին վերաբերեալ մասնաւոր սեղ մը: Այս շինութեան գծէն գործակառուցուած է վանքապատկան անտանները շէնքեր. մարագներ, գոմեր եւ այլն, նաեւ ձիթահան ու աղբիւր: Այս տեղն է որ կը տնօրինուին եթէ կարելի է այսպէս ըսել՝ այդ ընդարձակ թիւթին վերաբերեալ գործերն ու պէտքերը: Հայկական այս երկրորդ կաթնղլկոսարանն իր թիւթի առատութենէն զատ ունի նաեւ հողային անաղին հարստութիւն որ կը ձեւացնէ իր եկամուտի առատ աղբիւրները:

ՊԵՏ

[Շարունակելի]

ՌՈՒՄԱՆԱՀԱՅԵՐԸ



Յո՛ջ շան, 14 Մայիս

Արտասահմանի մամուլին մէջ ուրախալի է տեսնել թէ՛ Շարժում յոյժ կենսական խնդրի մը ձեռնարկուելու եղանակ, ինչ որ մինչև ցարգ եւ ո՛չ մէկ թերթ լռելով ուշադրութեան առած էր. Ռուսական հարցն է այս:

Շարժումն այս ձայնը օդին մէջ մարդը հաղար ու մէկ գոռումնու պիտի նամանի, եթէ ան չունենայ իր անդրադարձ արձագանգն ու ազդեցութիւնը: Ժողովուրդ մը՝ որ չի կարգար հայերէն, չի խօսիր ու չի հասկնար, ժողովուրդ մը՝ որ զուրկ է իր ազգային պատմութենէն, աւանդութիւններէն, ժողովուրդ մը՝ որ հաւաքական, ազգային կեանք ըստած բաները չունի, ահա Ռուսական հարցը:

Իրերը քննել, սակայն, ըստ երեսօթիւն, առանց ճիշդ գատողութեան մը, ու վճիռ արձակել հայութեան այս բեկորին վրայ՝ շատ սղակական պիտի ըլլար: Անոնք որ վերի քանի մը տողերը կարդալով՝ արհամարհական գաղափար մը միայն պիտի կազմեն Ռուսական հարցը վրայ, պարտաւոր պիտի ըլլան սակայն սքանչանալ անոնց այսօրուան գոյութեան վրայ իսկ, եթէ ըմբռնումը ունենան թէ՛ ինչպէս 4-5 դարերու ահաւոր հնութեան մէջէն հասած են մինչև ներկայ ժամանակները, առանց ունենալու օգնութիւն մը՝ ոչ բարոյական, ոչ նիւթական, իրենց մայր հայրենիքէն, ու ենթակայ սակայն, ամէն ատեն, բախտին հաղար ու մէկ սարարներով երուն ու ազդեցութիւններուն: Երեսօթ մըն է ասիկա, զոր կարելի է բացատրել ու վերադրել մեր տոհմային ապուստ նկարագրին միայն:

Թէ ինչո՞ւ համար 4-5 դար Ռուսական պարած ու այսօր՝ այս յուսահատ վախճանին մատուած ըլլայ, ասոր պատճառները կարելի է ամփոփել երկու որոշ գաղափարներու մէջ. նախ՝ կեդրոնին, այսինքն՝ Ազգ. Վարչութեան բացարձակ անփութիւնը: Ռուսական հարցը Ռուսական հարցը զազու թիւն նըկատմամբ, ու յետո՛յ՝ բացարձակ ազատութիւնը, զոր Ռուսական անկախութենէն ի վեր գրէթէ կը վախեն Ռուսական հարցը:

Ռուսական հարցն ներկայ վիճակը արդէն ամենամեծ փաստ մըն է ինքնին՝ ապացոյց ցանկերու համար թէ՛ մեր ազգային ղեկավարները, ըլլան հոգեւորական, ըլլան քաղաքական, բացարձակապէս եւ ո՛չ մէկ նշույցսոց տուած են հողածութեան՝ մեր այս կարեւորագոյն գաղութին, իրենց ներած ուժերուն չափովը:

Ռուսական հարցը չի սպասեր եւ ոչ ալ սպասած է, նախ՝ նիւթական օժտողականութեան իր մայր երկրէն, սա պարզ պատճառով որ արդէն իր երկրներուն մէջ գտնուող ազգային կորովի նկարագրերը յաջողած է ունենալ վայր մը ստեղծել հոն, ուր

թերեւս ուրիշ շատեր չի յաջողուող վարանութիւն մէջ գտնուէին. հետեւաբար, եղած է ու միշտ ալ պիտի ըլլայ ան մեր էն ունեւոր ու հարուստ մէկ գաղթականութիւնը: Բնականապէս, մեր Ազգ. վարչութիւնը միշտ անոր օժանդակութեան զրմած է այն ամէն պարագաներուն, երբ անի վիճակի մը մատնուած է նիւթապէս: Մեր ըսածները կարող են հաստատուել խօսել տալով դեռ կենդանի եղող տարեց անձնաւորութիւններ, ու մանաւանդ այն կարգ մը պատրիարքական կողակները, որոնք կը վերջանան անվերջանալի... «Ձեզ աղօթարարներով»:

Յետոյ, շատ տխուր գոյներով երեւան կելլայ մեր Ազգ. վարչութեան Ռուսական հարցը օժանդակութիւնը: Իրրեւ հարազատ գաւազկու Լուսաւորչի, միշտ ունեցած է, ամէն քաղաքներու մէջ, իր եկեղեցիները, ու ասոնց պաշտօնեաներուն համար՝ ի հարկին զրմած է կեդրոնին: Ազգային վարչութեան ազնուութիւնը սա միայն եղած է որ, ուր որ ամենէն անկարող, ամենէն անպիկար եկեղեցական պաշտօնեան գտած է, զրկած է այս հետաւոր անկեղեցիները, մտածում ունենալով սա համբաւաւոր գաղափարը թէ՛ «անոնք ոչինչ կը հասկնան»: Իսկ եթէ եկած են կարող անձեր՝ նպաստ հաւաքելու պատրուակով, անոնք ալ ասուպի մը պէս անհետացեր են, առանց շօշափելի կէտ մը կամ գործ մը թողած ըլլալու:

Ռուսական հարցը ունեցած է, մինչև և մտ ատեններս, իր ազգային շատ մը վարժարանները որոնց թիւը այսօր զժբախտաբար ետքի իջած է, ուր բազմաթիւ աշակերտներ յաճախած են, եւ սակայն, հոս ալ, վարչութիւնը անփոյթ դառնուած է, զրկած ըլլալով անկարող ուսուցիչներ: Օրինակները չեն պակսիր ներքին մէջ իսկ:

Իրաւունք մըն է սակայն առարկել թէ «վճարումից փոխարէն այս միայն կարող ենք ուղարկել»: Եւ սակայն եթէ վարչութիւնը հետաետե-

ՌՈՒՄԱ ԱՐԵՒԷԼԷՒ ՄԷՋ (6)

Սակայն Ռուսիա չբաւականացաւ միայն հայերը խաբելով: Երեւանը գրաւելու համար անոնցմէ օգտուելէ ետք՝ չբաւականացաւ միայն ձգելով որ թուրքերը մորթեն զիրենք, այլ հաւաքածեց նաեւ Ռուսական Հայաստանի մէջ: Նորագոյն սեղեկութիւններու նայելով ուսու կառավարութիւնը կոպկասի «Արձագանք»: Հայ թերթը գաղթեցուցած է «Պատասարեր ուղղութեանը» համար եւ փակած է 168 հայ վարժարաններ:

Բնդհանրապէս արեւելքի մէջ Ռուսիոյ բռնած անլուր ընթացքը ընդհանուր եւրոպական յուզում առաջ բերու: Արեւմուտքի մէջ ունեցած ամենէն մեծ բարեկամներն անգամ բողոքեցին իրեն դէմ: Ահաւասիկ ինչ կը զրէր ֆրանքոսուս գաղտնակցութեան մոլեռանդ կուսակից Հանրի Բօշֆօր 1897 մարտ 13ի «Էնթրանսիֆի» մէջ. «Փրանսական սեւակէտով հարց մը կայ, որ կը

ցցուի հօրիզոնին վրայ եւ որ վեհանախնութեան եւ մարդասիրութեան միտքով եթէ չլուծուի՝ ահաւոր խռովութիւն մը պիտի ձգէ մեր ազգային խորհուրդներուն մէջ. հարցը թէ ինչ հետեւանքներ կարող է ունենալ մեր գաղտնակցութիւնը Ռուսիոյ հետ. — ամէն ժամանակ այնպէս համարուած է թէ ուսու դիւանադէտները մեծ խորամանկութիւնով օժտուած են. ուրեմն շատ կարելի է որ Պոլսոյ, Վանի, Տիգրանակերտի եւ Տրապիզոնի ջարդերէն յետոյ Ռուսիոյ կայսերականաւորեալ զգուշութիւնը կատարելադրուած մարիալէտական ծրագրի մը մէկ մասը կը կազմէ: Ռուսիա՝ Սուլթանին սեւակ մը յանձնարարադիր կուտայ, որպէս զի այդ թշուառականը՝ արիւնի հոտէն զրգուած՝ լափէ, մինչև որ անոր մահացուցիչ լուծին ենթակայ ազդերէն մէկը վճռէ զայն թօթափել: Այն ատեն Չարը հանդէս կուգայ եւ հրապարակով հետեւեալ յայտարարութիւնը կընէ. «Հիմա Եւրոպա թոյլատրելէ ետքը որ

Թուրքիոյ մէկ մասն անջատուի՝ իրարէս բոլոր գաղտնակները պատուած են՝ եւ ոչ մէկ պայմանագիր չկատարուող զիս Պոլսոյ քաղաքը»: Բայց ամէն մարդ պիտի ընդունի թէ մեր գաղտնակցութեան կառավարման մը անցնիլը դիտող կովու մը աչքով էր նկատէ այն ահուկի ջարդը՝ որ վերջերս այնքան ապականեց օզը, որ ժանտախտ բերու: Է՛, լաւ, կըսենք մենք, կա՛նք առ հող...»

Մենք կարող էինք տակաւին հատուածներ մէջ բերել միապետական թերթերէ՝ (Ռթօ իթէ, Սօլէյլ) ինչպէս նաեւ արմատականներէն (Միւթիթ Ռեբրիպլիք, Բեօբլ, Ռեվէյլ տիւ Նօն) ուր միեւնոյն հարցը կը յուզուի աւելի սուր կամ աւելի մեղմ կերպարանքի ներքեւ:

Վերջին ուսօթըրական պատերազմի միջոցին՝ պուլկարական սարսափներուն առթիւ Անգլիոյ մէջ տիրող շարժումներու ատեն կային շատ անզլիացիներ

որոնք Ռուսիոյ անկեղծ առաջադրութիւններուն հաւատք ընծայելով՝ կը յարէին անոր: Հիմա անոնցմէ շատերը կը մերժեն անոր հետ ո՛ր է համեմալութիւն ունենալ: Ամենէն առաջ կուգայ կլատսոն, Ռուսիոյ նախկին «մեծ բարեկամը»: Այլեւայլ նամակներու մէջ ան կը յարձակի ուսուական այժմեան քաղաքականութեան վրայ եւ ի մէջ այլոց՝ 1897 մարտ 13 թուով Ռեւսթիւնթըրի դուքսին ուղղած նամակին մէջ Նիքօլա Բ.ը կը կոչէ վորձաութիւն ու հրմատութիւն չունեցող երիտասարդ մարդ մը, որուն կառավարութիւնը ճշմարիտ ու կատարեալ «բռնապետական է»:

Վերջը կուգայ նախկին ուսուստեր արմատական թերթը «Տէյլի Գրօնիքը, ուր 1897 մարտ 30 թուով խմբագրականին մէջ կը կարգանք հետեւեալը.

Տօֆր. Բաֆոֆի

[Շարունակելի]

սուբստանսը բարոյական դոկտրինայի մասին մեր իսկ յանձնառու եղած ու շնորհքով մարդիկներ զրկած ըլլալը Ռուսական, այսօր Հայաստանի այս թշուառ վիճակին մէջ, Ռուսական հայր անոր էն զօրաւոր ստատարներէն մէկը եղած կրնար ըլլալ, եթէ ազգային զգացումը վառ պահած ըլլալայինք մենք անոր սրտին մէջ: Եւրոպայի միջոցով չի բացագանչէ, ուրիշն, իր Հայաստանի համար բացած նպատակ մասին թէ՛ անաւարբեր են Ռուսականայինք մեր ազգային ցաւերուն: Ուղիղ դատենք: Մեր հայրերը չեն ցանած որ քաղկենք մենք այսօր:

Եւ սակայն դարձեալ խօսելով վճարումի մասին, Ռուսականայինք իր բարեպաշտութեամբ, կամ լաւ եւս, իր բացարձակ վստահութեամբ Ազգականը, վարչութեան վրայ, միշտ առատ կերպով վարձատրած է իր սուտըրնները, առանց անոնցմէ օգտուելու սակայն:

Ահա գաղտնիքներէն մէկը այն գաղափարին թէ ինչու մենք Ռուսականայինք ու փոխադարձաբար ան մեզի խորթ կըրոր մը պէս կերեւինք...

Ուրիշ անգամ կը բացատրենք Ռուսականայինք կրած ազգայնութեանը արտոյտ արարէն:

ԿՈՆԻԿ

ՌՈՒՍԱՉՈՒՔԻ ԸՆԹԵՐՅԱՐԱՆԸ

—)(—

Մեր նախորդ թիւերէն մէկուն մէջ հրատարակած էինք ընդդէմ մադիւրներու մէկ առաջարկը որով հաւաքական ժողով մը զուամարումը կը խնդրէին թիւերմացութիւններու վերջ տալու համար: Այժմ, նոյն ընթերցարանի վարչութեան կողմէն ստացած ենք ընդարձակ գրութիւն մը որ աւելի կամ նուազ բանաւոր առարկութեաննով կը մերժէ այդ ժողովին գաղափարը:

Մենք, ինչպէս բոլորքը չի հրատարակեցինք իր ամբողջութեան մէջ, նոյնպէս ալ ներկայ պատասխանը չի պիտի կրնանք հրատարակել, պարզապէս տեղւոյ անձկութեան պատճառով: Բայց եթէ երկու հակառակորդ կողմերը կը փափաղին իրենց գրութիւնները անպատճառ հրատարակուած տեսնել, յանձն կառնենք այդ խնդրին վրայ ուղուած ինչ չափ յաւելուածական թիւեր հրատարակել, բնականաբար այն պայմանով որ ծախքերը իրենց կողմէն հոգացուին:

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

—)(—

Վանէն Մ. Մկրեան նամակ մը գրելով «Բիւզանդիոն»-ի կը պարզէ բողոքական և մանաւանդ կաթոլիկ միսիոնարներու մարդորսական ձեւաւորները: Բողոքականները որ անխարականութեան ամէն երեւոյթ կը ջանան ցուցունել կաշխատին գարոցական սղոց մտքին մէջ իսկ իրենց

մայրենի եկեղեցիէն բաժնուելու գաղափարը մտցունել: Հայ եկեղեցին կուզան, բայց իրենց վարմունքով գալթակալութիւնը պատճառեն: Կաթոլիկ կրօնաւորները, օգտուելով հայ քահանաներու անաւարբերութենէն, ամէն տեղ կը հասնին, ազգատին, հիւանդին, տկարին հաւատարմութեամբ, անանկ որ 100 չափ բնականաբար անոնց գիրկին ինկած են:

Ինչմիտի մէջ յոյն քանդակագործ մը հանգուցեալ Տիգրան Զուհաճեանի կիսարձանը շինելով ազգին պիտի նուիրէ: Քանդակագործը հիացող մըն է եղբւր հայ արուեստագէտի սաղանդին: Հայէ՛ն աղէկ:

Մանրասի մէջ Պատ. Տոմարեան «Ներտատարաց քրիստոնէական ընկերութիւն» մը հիմնելով զայն միջոց ըրեր է բրտբախանաւոր. պատուելին սաու շողբաւ պայմանը գրեր է. «այն անձը որ աւետարանական եկեղեցին չայցելէր, իրաւունք չունի նոյն ընկերակցութեան գործադիր ժողովին անդամ ըլլալու»: Իր քարոզներուն մէջ յաճախ կը յարձակի եղբւր հայ եկեղեցականներու դէմ, խեղճուկրակ ունկնդիրներու առջեւ: Այս պատուելիներու հիւանդութենէն ե՞րբ պիտի ազատինք:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ Ը

Վերջապէս օրին մէկը երեւան ելաւ ծովակալ Սէրվէրաի սպանիական համալսարանումը որ վաղեց մտաւ Սանթիակոի (Քուպա) նաւահանգստին խորը: Սակայն իր այս քաջագործութիւն իրեն չմնաց. ճիւղայիններուն նաւատորմը, որուն հրամանատարն է Շէյ, ետեւէն հասաւ, ու զոցեց խցեց Սանթիակոի նաւահանգստին նեղուկ բերանը: Քիչ օրէն, Սամբըն ծովակալն ալ իր նաւերով պիտի երթայ միւսալ Շէյին, որով այդ կէտին վրայ խռուած պիտի ըլլան տասնեկներ ամերիկեան զրահարներ, կատաղի և կրակոտ:

Հիմակ ամերիկացիք քահաճ կը խնդան ու ծափ կը զարնեն այս ախամայ բանասիրութեան վրայ, որուն եւթարկիցին սպանիացիները ինքզինքնին: Մանրասի ճակատամարտին նախաշաւիցն ալ այսպէս չէ՞ր. սպանիական նաւատորմը ծովեղբրքի ամբողջութեանց կրակին ապաւինելով գնաց նաւահանգստին խորը փակուեցաւ ու այդ տեղ իսկ ծովամոյն եղաւ:

Մինչեւ ցարդ ու է բախում տեղի չէ ունեցած, թէեւ հակասական հեռագրեր մէկ կողմէ կը

ճանուցանեն թէ ծովակալ Շէյ Սանթիակոի շրանցը մանելով փճացուցեր է Սէրվէրաի նաւատորմը և ուրակոծեր է Սանթիակոն, միւս կողմէ թէ Սանթիակոի լացերը յաղթուեր է Սամբըն ծովակալ և սպանուեր է:

Ծովակալ Տիգրան մայիս 13 թուով կը հեռագրէ Քալթիպէն (Ֆիլիպին) թէ կացութիւնը միշտ նոյնն է: Պաշարումը կը շարունակէ. Մանրասի ժողովուրդը բրիտիճէ զստ ուրիշ ուսեստ չի կրնար ճարել:

Ֆիլիպինի կղզիներու դրաման համար կազմուած արշաւախումբը սկսեր է ճամբայ ելլալ Սաթրիկայէ: Զինուորաբարձ նաւերը հաղլւ 25 օրէն պիտի կըրնան Մանրասի հասնիլ՝ ճամբան ամուս առնելով Հալաթին: Սակայն, Ֆիլիպիններու սպանիացի կառավարիչը իմացուցեր է իր կառավարութեան իբր թէ ապրտամբները առաջարկեր են շօրաւար Օկուսթիլ՝ ամերիկացիները զարնելու համար: Միւս կողմէ, Մ. Նահանգաց կառավարութիւնը պատրաստութիւններ կը տեսնայ իսկուպէս դրաւելու Ֆիլիպինները, անոնց սպագայ կազմակերպութեան ծրագրերն իսկ պատրաստելով:

Ուաշինկթընի մէջ դիւալին դաւաղութիւն մը երեւան ելեր է: Ամայի տեղի մը մէջ գտնուեր է սնտուկ մը որ կը պարունակէր 250 օխա արնամիթ և նիթրոկլիսէրինի մեծ անօթ մը: Այս գաւազը թիւն պատրաստուած է եղբւր սպանիացի լրտեսներու կողմէ, որոնք կողէին բոլոր պաշտօնարանները օդը հանել, ինչպէս նաեւ նախագահին պալատը: Այս գէպը սաստիկ յուզում առաջ բերած է:

Չ Ա Ն Ա Չ Ա Ն Բ

Շարաթ օրը Լոնտոնի մէջ սեղի ունեցեր է Պ. Կլատոգոնի յուզարկաւորութիւնը մեծ հանգչսով: Ներկայ էին խորհրդարանի բոլոր անդամները, Կալէսի իշխանը, Եորթի իշխանն ու իշխանուհին, արքայական իշխանները, բազմաթիւ հասարակութիւն:

Քէօնիչէ Չայթունկ կը ծանուցանէ թէ Գուուր առաջարկեր է Ռուսիոյ պատերազմական տուգանքը տալ հինգ անգամէն, տարեկան 300,000 ոսկի վճարումով: Այս գումարները կանոնաւորապէս վճարելու երաշխաւորութիւն մը առաջարկեր է: Այս մասին Ռուսիոյ որոշումը դեռ յայտնի չէ:

Ֆէրտինանա իշխանն ու իշխանուհին Սուլթանին հրաւերովը Պոլսի գացին, ուր մեծաշուք ընդունելութիւն եղաւ իրենց: Պալատին մէջ հացիկերոյթ տեղի ունեցաւ: Իշխանը Ռուս դեսպանին առաւ քաղաքային արժանեաց ախանախու

պատուանշանը: Իշխանը և իշխանուհին շարաթ Սօֆիա դարձան:

ՏԵՂԱԿԱՆ

—)(—

Արտաքուտած Տ. Գէորգ քահանային վերահաստատումը պահանջու է իբր 100 ստորագրութիւն կըող հանրագրութիւն մը ներկայացուեր է տեղւոյս թաղխորհրդին որ այդ ստորագրուներէն 20 հոգի կանչեր է կերակի օրը՝ համաձայնութեան մը յանդէլու համար: Թեր ու դէմ վիճաբանութենէ ետք, թաղխորհուրդը պնդեր է իր որոշման վրայ, և սպառնացեր է հրաժարիլ:

Տեղւոյս վարժարանին ուսուցիչներուն մեծ մասը գործադուլ ըրեր է եղբւր ամսական շտանալուն համար:

ԻԼԱՆԸ ՐԵՍՄԻ

—)(—

Վառնա վէ Էթրաթ քէօյլէրաէ Իրան տէլէթի թէպատարնտա պուլունան բողոքութեամբ վեղաթա պիտիբրիբր քի, Մայիս այնտա քէնալէրի շախսէն վէ եախօս օրմատուրը հայտէ վէքալէթէն բազար կիւնլէրի էօյլէնաէն սօղրաւանաթ 1տէն 5է գատար գօնսօրտանէնէ թէչրիֆ խոուպ, էլլէրիւնաէ օլան էվրազարթ Թասաթ վէ խիւլէրինի քիթիւկ թէֆաէրինէ գայա իթիթիթի արիւլը:

Վիս Գօնալըս քր Բեքս

Վառնա, Գ. ուչաս, ուլիցա Տէպրքա Կ. 66:

ՍԱՓՐԻՉ

—)(—

Պատիւ ունիմ ծանուցանել արգոյ հասարակութեան թէ ժամանակէ մը ի վեր աշխատելով Օթէլ Գօմէրիալի կից սաթիւր Անկիլ Եուվանօֆի քով և տեղւոյս պուլիար և հայ պատուարժան յաճախորդացս վստահութիւնն առ իս գրաւած լինելով, այս անգամ մասնաւոր խանութ մը բացած եմ Ուլիցա Բրէսլաւսքա, օթէլ իմրէրալի կից:

Լիւրիս եմ թէ պատուարժան հասարակութիւնը չպիտի զլանայ շարունակել ինձ իր քաջալերը, այցելելով այսուհետեւ իմ նոր խանութը ուր պիտի գտնէ կանոնաւոր գործ և ամենամեծ մաքրութիւն:

Միհրան Սեդրակեան  
Եւ իմ ընկերս  
Սեթօն Կաղիկեան

ՃԱՏՍՐԱՆ ԵՒ ՉԻՍՍԱՐԱՆ

—)(—

ՀԱՃԻ ԲԱՆԱԳՈՒՆ ԺԻՇԻ ԴԵՄԸ կը բանեցունէ Պ. Տիգրան Թիւֆէկլինեան և ընկիր

Արհեստին մէջ կատարելութեան հասած երիտասարդ հայու մը ձեռամբ սարքուած այս հովասուն, մաքուր ու զեղջական հաստատութիւն ոչ միայն պատիւ կը բերէ հայ ճաշակին, այլ և մեծ խթան մը կը ըլլայ որ հայ ու օտար փափակակրներ իրենց գարնանային ու ամառնային ժամադրաւայր մը ընեն գայն գրօնելու և ճաշելու: Պոնտոսեան ախորժարք հովիբուն ու Սեւ ծովի կապոյտ տարածութեան առջեւ:

Հակառակ այս հրապուրիչ առաւելութիւններուն, յաճախորդները պիտի գտնեն յոյժ զիւրաւատչելի գիներ թէ ըմպելիքի թէ կերակուրներու մասին:

Печатница „Взаимность“ Варна.